ԵԴ/0635/01/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5 փետրվարի 2024 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով թիվ ԵԴ/0635/01/23 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի հունվարի 26-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2023 թվականի մարտի 30-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է Վլադիմիր Օգանեսի Աբոյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 182-րդ հոդվածի 1-ին մասով թիվ 65150222 (ԵԴ/0635/01/23) քրեական վարույթը:

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2023 թվականի ապրիլի 3-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ/0635/01/23

քրեական վարույթն ստանձնելու և 2023 թվականի ապրիլի 14-ին նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.2. 2023 թվականի նոյեմբերի 17-ին թիվ ԵԴ/0635/01/23 քրեական վարույթը վերամակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Ա.Մաթևոսյանին:

1.3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2023 թվականի նոյեմբերի 23-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ/0635/01/23 քրեական վարույթն ստանձնելու և 2023 թվականի դեկտեմբերի 7-ին նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի հունվարի 11-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

3. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի հունվարի 26-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ/0635/01/23 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի հունվարի 30-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. 2023 թվականի մարտի 7-ի որոշմամբ Վլադիմիր Օգանեսի Աբոյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ *«նա ուրիշի գույքը հանձնելու պահանջ ներկայացնելու դիտավորությամբ, 2022 թվականի մարտի 16-ին Վարդան Սերյոժայի Թադևոսյանին պատկանող «Odnoklassniki.ru» կայքի անհատական էջին անձնական նամակ է ուղարկել այն մասին, որ եթե նա ռեալ զբաղվում է կունիլինգուսով, ապա թող դեմքը՝*

ամբողջական, լեզուն դուրս հանված վիճակում, պարզ նկարվի և ուղարկի իրեն և եթե ինքը հավանի նրան, ապա կհանդիպեն: Այնուհետև Վարդան Սերյոժայի Թադևոսյանից ստանալով պահանջված լուսանկարը՝ 16.03.2022 թվականին նա Վարդան Թադևոսյանի կողմից ուղարկված լուսանկարի վրա կատարել է վերջինիս անձը արատավորող տեղեկություններ այն մասին, որ վերջինս համասեռամոլ է և սեռական բնույթի ծառայություններ է մատուցում, և այն ներբեռնել է «Odnoklassniki.ru» սոցիալական կայքի LGBT անվամբ խմբում, հղումը հաղորդագրությամբ ուղարկելով Վարդան Թադևոսյանին և լուսանկարը ջնջելու դիմաց վերջինիցս պահանջել 10.000 ՀՀ դրամ գումար և սպառնացել, որ, եթե իր՝ Vivaro sport 34325834 հաշվին 10.000 ՀՀ դրամ գումար չփոխանցի, ապա նա լուսանկարը և իր անձն արատավորող գրառումները չի ջնջի խմբից»[1]:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի հունվարի 11-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Նախնական դատաքննությունների ընթացքում քննարկելով վարույթի ընդդատության հարցը Դատարանը կողմերին պարզաբանեց, որ քրեական գործի նախնական ուսումնասիրությունից ակնհայտ է, որ.*

- մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել հանցանքի կատարման վայրը (տե՛ս «Հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին» 2023 թվականի մարտի 7-ի որոշումը, ինչպես նաև թիվ 65150222 քրեական վարույթով մեղադրական եզրակացության եզրափակիչ մասը),

- թիվ ԵԴ/0635/01/23 քրեական գործով (նախաքննության համար՝ 65150222) մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմինը հանդիսացել է ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային վարչությունը, որի նստավայրը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում,

- մեղադրյալ Վլադիմիր Օգանեսի Աբոյանի մշտական բնակության վայրերն ըստ մեղադրական եզրակացության և նախնական դատաքննությունների ընթացքում վերջինի բացատրությունների՝ հանդիսացել են Վրաստանի Հանրապետության

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 225-226:

Ախալքալաքի շրջանի Բարալեթ գյուղը և ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Ռոսիա փողոցի 6 շենքի 1 բնակարանը:

(…)

Դատարանն արձանագրում է, որ նախնական դատաքննությունների ընթացքում քննարկելով վարույթի ընդդատության հարցը, Դատարանը պարզել է, որ թիվ ԵԴ/0635/01/23 քրեական գործն ընդդատյա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, քանի որ մինչդատական վարույթի ընթացքում առերևույթ հնարավոր չի եղել պարզել ենթադրյալ հանցանքի կատարման վայրը, և քրեական գործով մինչդատական վարույթն իրականացվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքից դուրս, հետևաբար, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261 հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումները, թիվ ԵԴ/0635/01/23 քրեական գործը պետք է փոխանցել ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, քանի որ այդ դատարանի դատական տարածքում է գտնվում տվյալ քրեական գործով մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: (…)»[2]*:*

7. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի հունվարի 26-ի որոշման համաձայն. *«(…) [Ք]րեական գործում առկա Վլադիմիր Օգանեսի Աբոյանի որպես վկա հարցաքննության արձանագրության համաձայն (…)՝ քննիչի այն հարցադրմանը թե. «ինչ հեռախոսահամարներ եք օգտագործել Դուք 2022 թվականի մարտ-ապրիլ ամիսների ընթացքում», Վլադիմիր Օգանեսի Աբոյանը պատասխանել է. «ես գտնվել եմ Վրաստանի հանրապետությունում, օգտագործել եմ վրացական հեռախոսահամար»:*

Վերը նշվածից առերևույթ հետևում է, որ Վլադիմիր Օգանեսի Աբոյանին մեղսագրվող արարքը ենթադրաբար կատարվել է Վրաստանի Հանրապետության տարածքում՝ 2022 թվականի մարտի 16-ին:

---

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, թերթեր 43-46:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում վարույթն ընդդատյա է այն դատարանին, որի դատական տարածքում է գտնվում մեղադրյալի բնակության կամ հաշվառման վերջին վայրը, քանի որ սույն դեպքում օրենսդիրը հստակ կարգավորել է, որ այլ պետության տարածքում ենթադրաբար կատարված հանցանքի վերաբերյալ վարույթն ընդդատյա է այն դատարանին, որի դատական տարածքում է գտնվում մեղադրյալի բնակության կամ հաշվառման վերջին վայրը, իսկ եթե հնարավոր չի եղել այն պարզել, ապա այն դատարանին, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթը վերջինն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

Ըստ մեղադրական եզրակացության՝ մեղադրյալ Վլադիմիր Օգանեսի Աբոյանի բնակության վայրը՝ Կոտայքի մարզ, քաղաք Աբովյան, Ռոսիա 6-րդ շենք, 1-ին բնակարան հասցեն է, իսկ հաշվառման վայր է հանդիսանում՝ քաղաք Երևան, Դավիթաշեն վարչական շրջան, 3-րդ թաղամաս, 16-րդ շենք, 35-րդ բնակարան հասցեն:

Այս պայմաններում ակնհայտ է, որ սույն քրեական գործն ընդդատյա է կամ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, կամ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին: Հիշյալով պայմանավորված Դատարանը գտնում է, որ սույն դեպքում կիրառելի չեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված տարածքային ընդդատության կանոնները: Ինչպես երևում է հիշյալ կանոնից, այն գործում է բացառապես այն դեպքում, երբ առանձին հարուցված և քննվող քրեական գործերը միացվում են մեկ վարույթում, մինչդեռ սույն դեպքում քրեական գործերի միացում տեղի չի ունեցել տարածքային սկզբունքի հաշվառմամբ, հետևաբար մինչդատական վարույթի ավարտման վայրի դատարանի կանոնը սույն դեպքում չի գործում:

Բացի այդ, Դատարանը փաստում է, որ սույն գործով ընդդատության հարցի որոշման վերաբերյալ առաջացած խնդիրը հետևանք է նաև այն բանի, որ երբ տուժող Դավիթ Ավետիսյանի հաղորդման հիման վրա հարուցված թիվ 65150222 քրեական գործի նախաքննության ընթացքում մեղադրողի կողմից 2023 թվականի փետրվարի 27-ին որոշում է կայացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի

12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով քրեական հետապնդումը դադարեցնել և նշված որոշման կայացումից հետո ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնում տուժող Վարդան Թադևոսյանի հաղորդման հիման վրա հարուցված քրեական գործի նախաքննությունը ըստ քննչական ենթակության պետք է ուղարկվեր ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին՝ հետագա նախաքննության կատարումը շարունակելու համար:

Բանն այն է, որ տուժող Վարդան Թադևոսյանի հաղորդման հիման վրա քրեական գործը հարուցվել է 25.04.2022 թվականին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի կողմից և նույն օրը որոշում է կայացվել թիվ 15853022 քրեական գործը ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին ուղարկելու մասին և ընդունվել է քննիչ Ա.Մանուկյանի վարույթ և մինչև 14.09.2022 թվականը կատարվել է նախաքննություն:

Մինչդեռ ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական մարմինը անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների պահանջը, Դատարանն արձանագրում է, որ առանց որևէ պատճառաբանության ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնում տուժող Վարդան Թադևոսյանի հաղորդման հիման վրա հարուցված քրեական վարույթի նյութերը չի ուղարկել ըստ քննչական ենթակայության համապատասխան քննչական ստորաբաժանում, որպիսի հանգամանքը, Դատարանի գնահատմամբ, հանգեցրել է նաև քրեական վարույթի տարածքային ընդդատության փոփոխության, ինչը Դատարանի կարծիքով իրավաչափ չէ:

Դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ «Ընդդատություն՝ անկախ քննչական ենթակայությունից» կանոնը չի կիրառվում տարածքային ընդդատությունը որոշելու հետևյալ դեպքերում՝

1) որևէ կերպ հնարավոր չէ պարզել հանցանքի կատարման վայրը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մաս),

2) հանցանքը ենթադրաբար կատարվել է այլ պետության տարածքում և հնարավոր չէ պարզել մեղադրյալի բնակության կամ հաշվառման վերջին վայրը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ մաս):

«Ընդդատություն՝ անկախ քննչական ենթակայությունից» կանոնը, թեև անմիջապես չի վերաբերում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերին, սակայն դատարանը նույնիսկ այս դեպքերում, նկատի ունենալով «ընդդատություն՝ անկախ քննչական ենթակայությունից» կանոնի ընդհանուր գաղափարը և հիմք ընդունելով մեղադրյալի՝ բնական (օրինական) դատարանի սահմանադրական իրավունքը, քրեական գործը ստանալուց հետո պետք է ստուգի, թե արդյոք նախաքննության մարմինը տարածքային քննչական ենթակայության կանոնները ճիշտ է կիրառել, թե ոչ: Եթե պարզվի, որ քննչական ենթակայության կանոնների ակնհայտ սխալ կիրառման արդյունքում փոխվել է նաև տարածքային ընդդատությունը, ապա դատարանը պարտավոր է վարույթը փոխանցել այն դատարանին, որի դատական տարածքում գտնվող նախաքննության մարմինը, ըստ տարածքային քննչական ենթակայության պատշաճ կանոնների, պետք է իրականացներ մինչդատական վարույթ:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ տարածքային ընդդատությունը փոխելու՝ վերը նշված նախապայմանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունները չեն բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջից: (…)»[3]*:*

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ/0635/01/23 քրեական վարույթն

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, թերթեր 48-59:

ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման*

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]*:*

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

4. Այլ պետության տարածքում ենթադրաբար կատարված հանցանքի վերաբերյալ վարույթն ընդդատյա է այն դատարանին, որի դատական տարածքում է գտնվում մեղադրյալի բնակության կամ հաշվառման վերջին վայրը, իսկ եթե հնարավոր չի եղել այն պարզել, ապա այն դատարանին, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթը վերջինն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: (…)»

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատալսումների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

4. Վարույթն ըստ ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա տարածքային ընդդատությանը:

(…)

6. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահը (…) որոշումը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի ընդդատության հարցը: (…)»:

13.1. Վերոգրյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից բխում է, որ քրեական վարույթների ընդդատության ընդհանուր այն կանոնից, որ տարածքային ընդդատությունը որոշվում է վերջին հանցանքի կատարման վայրով, օրենսդիրը նախատեսել է բացառություն այն դեպքում, երբ մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել ենթադրյալ հանցանքների կատարման վայրը: Տվյալ պարագայում, մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Վլադիմիր Օգանեսի Աբոյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասով թիվ 65150222 քրեական վարույթով նախաքննությունն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ մինչդատական վարույթի ընթացքում առերևույթ հնարավոր չի եղել պարզել ենթադրյալ հանցանքի կատարման վայրը, գտել է, որ մեղադրանքը պետք է քննի ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քանի որ այդ դատարանի դատական տարածքում է գտնվում սույն քրեական գործով մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը[7]:

- Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, հիմք ընդունելով Վ.Աբոյանի ցուցմունքն այն մասին, որ 2022 թվականի մարտ-ապրիլ ամիսների ընթացքում գտնվել է Վրաստանի Հանրապետությունում, գտել է, որ Վ.Աբոյանին մեղսագրվող արարքը ենթադրաբար կատարվել է Վրաստանի

[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

Հանրապետության տարածքում, հետևաբար մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մեղադրյալի բնակության կամ հաշվառման վերջին վայրը[8]:

15. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ Վ.Աբոյանին մեղսագրվող ենթադրյալ հանցանքի կատարման կոնկրետ վայրը պարզված չէ, հետևաբար, սույն վարույթի տարածքային ընդդատությունը որոշելիս պետք է հիմք ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը՝ համաձայն որի՝ մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: Սույն վարույթով մինչդատական վարույթն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում, որի նստավայրը գտնվում է Արմավիրի մարզում:

16. Ինչ վերաբերում է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի այն հետևությանը, որ Վ.Աբոյանին մեղսագրվող արարքը ենթադրաբար կատարվել է Վրաստանի Հանրապետության տարածքում՝ հարկ է արձանագրել, որ վերոնշյալ հանգամանքը **վարույթի տվյալ փուլում բավարար փաստական տվյալներով չի հիմնավորվում,** հետևաբար չի կարող քրեական վարույթի տարածքային ընդդատությունը որոշելու հիմք հանդիսանալ:

Միևնույն ժամանակ, անդրադառնալով Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի այն դատողությանը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված կանոնը գործում է *«բացառապես այն դեպքում, երբ առանձին հարուցված և քննվող քրեական գործերը միացվում են մեկ վարույթում»*, հարկ է նշել, որ այն հիմնավոր չէ, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասը վերաբերելի է նույն հոդվածի ինչպես 2-րդ, այնպես էլ 1-ին մասերով նախատեսված դեպքերին:

---

[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Հարկ է նաև նշել, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի այն եզրահանգումը, ըստ որի՝ դատարանը պարտավոր է վարույթը փոխանցել ըստ ընդդատության, եթե կպարզի, որ խախտվել են քննչական ենթակայության կանոնները, նույնպես ընդունելի չէ, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նման պայման նախատեսված չէ:

17. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ/0635/01/23 քրեական վարույթն ընդդատյա Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր չէ:

18. Ամփոփելով՝ գտնում եմ, որ սույն վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Վլադիմիր Օգանեսի Աբոյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասով թիվ ԵԴ/0635/01/23 քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ